2249
1134
325
135-45

# ՀԱՇԻՒ

## ՀԱՅՈՒՀԵԱՑ

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## ԹԻՖԼԻԶՈՒՄ:

**Սկսեալ ի 1-ն Մարտի 1887 ց 1-ն Մարտի 1888 ամ:**

---

ԹԻՖԼԻԶ
Տպարան Մովսէս Վարդանեանի
1888

13545

## Ա. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Ընկերութեան պատուաւոր նախագահ՝ Նորին Սրբազնութիւն Տէր Արիստակէս եպիսկոպոս՝ փոխանորդ Առաջնորդ թեմին Հայոց Վրաստանի և Իմէրէթի։

## I. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Ատենապետուհի, Տ. Նադէժդա Ալիխանեան

Փոխ-Ատենապետուհի, Իշխանուհի Կատարինէ Բէհբութեան

Անդամք:
- տ. Սոֆիա Բաբայեան
- տ. Կատարինէ Եւանգուլեան
- տ. Վարվառէ Ռոտինեան
- օր. Սոֆիա Փսարեան
- օր. Կատարինէ Օրբելի

Ատենադպիր Աղէքսանդր Քիշմիշեանց

## II. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄՔ

Ադամեան Թամարա
Ալիխանեան Նադէժդա
Ալիխանեան Կատարինէ
Ալէլեան Վարվառէ
Աղաբէգեան Մարիամ
Արամակլիսեան Նունէ
Արղութեան Կատարինէ մայրապետ
Իշխ. Արղութեան Մարիամ
Իշխ. Արղութեան Կատարինէ
Աքիմեան Վարվառէ (Մոսկվայից)
† Բաղդոյեան Թէկղէ (Թէլաւից)
Իշխ. Բէհբութեան Վարվառէ



Էմինեան Աննա
Ենակոլոփեան Նատալիա
Թայիրեան Եղիսաբէթ
Թայիրեան Կատարինէ
Թայիրեան Հռիփսիմէ Կոյս
Լէոնոզեան (Մոսկվայից)
Ծովիանեան Մայիա
Կամսարական Աննա
Ղամբարեան Նունէ
Մանթաշեան Դարիա
Մելիքեան Աննա
Մեհրաբեան Կատարինէ
Նադիրեան Կատարինէ
Նազարբէգեան Մինա
Ջիթախեան Մարիամ
Ջանումեան (Մոսկվայից)

---

## III. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՔ

Իշխ. Աբամելիքեան Դարիա
Աբամելիքեան Եփրոսիմէ Կոյս
Աբելեան Եղիսաբէթ
Աբիսողոմեան Նունէ
Աբովեան Շուշանիկ
Ադամեան Քալիա
Արամեան Եղիսաբէթ (Բագուից)
Աստուրեան Խաթունիկ
Ադէլխանեան Հեղինէ
Ախվերդեան Մանեայ
Ախվերդեան Աննա
Ախվերդեան Աննա
Ախվերդեան Հռիփսիմէ

Աւխնազարեան Մարթայ
Իշխ. Արղութեան Նադէժդա
Իշխ. Արղութեան Մարիամ
Իշխ. Արղութեան Կատարինէ
Իշխ. Արղութեան Սոֆիա
Աղամջանեան Կատարինէ
Անանեան Օլգա
Ամիրաղեան Աննա
Իշխ. Ամատունի Հէղինէ
Անտօնեան Աննա (Բագուից)
Աւթանդիլեան Հեղինէ
Աւթանդիլեան Եղիսաբէթ

—

Բալտազարեան Սոֆիա
Բաբայեան Սոֆիա
Բայսողոլեան Շուշանիկ
Բատիեվսկայա Կատարինէ
Իշխ. Բէհբութեան Կատարինէ
Իշխ. Բէհբութեան Եղիսաբէթ
Իշխ. Բէհբութեան Եղիսաբէթ
Իշխ. Բէգթաբէգեան Եղիսաբէթ
Իշխ. Բէհբութեան Աննա
Բորիսեան Մարիամ
Բէգնազարեան Մարիամ

—

Գէորգեան Նունէ
Գիրգիդեան Եղիսաբէթ

—

Դաւթեան Մարիամ
Դէմուրեան Եղիսաբէթ
Դօլուխանեան Եղիսաբէթ

—



Եսայեան Վարվառէ
Եարալեան Աննա
Եարալեան Կատարինէ
Եղիազարեան Կատարինէ
Եղիազարեան Սանդուխտ
Երեցփոխեան Կատարինէ
Երիցեան Սրբուհի
Եւանգուլեան Կատարինէ
Եւանգուլեան Նունէ

—

Զարգարեան Նունէ
Զօհրաբեան Վարվառէ

—

Էլիմիրզեան Սալոմէ
Էնակոլոփեան Հեղինէ
Էնակոլոփեան Սոֆիա
Էնակոլոփեան Եղիսաբէթ
Էֆէնդեան Նունէ

—

Թամամշեան Աննա
Թամամշեան Վարվառէ
Թամամշեան Սալոմէ
Թամամշեան Վարվառէ
Թամամշեան. Դարիա
Թամամշեան Սոֆիա
Իշխ. Թումանեան Աննա
Թութունեան Սոֆիա
Իշխ. Թումանեան Անաստասիա
Իշխ. Թումանեան Մարիամ

—

Իզմիրեան Սոֆիա
Իզմայելեան Աննա
Իլինա Թամարա

—

Լալայեան Մարգարիտ (Բագուից)
Լալայեան Զինաիդա (Բագուից)

—

Խալաթեան Կատարինէ
Խարազեան Վարվառէ
Խատիսեան Մարիամ
Խոսրովեան Սոֆիա
Խանդամեան Դարիա
Խուդադեան Վարդուհի
Խուդավերդեան Սոֆիա
Խօջայեան Սոֆիա
Իշխ. Խօջամինասեան Սոֆիա

—

Ծուրինեան Նատալիա
Ծուրինեան Աննա
Ծուրինեան Շուշանիկ
Ծուրինեան Ալէքսանդրա
Ծատուրեան Վարդուհի
Ծովիանեան Կատարինէ
Ծովիանեան Մարիամ
Ծովիանեան Սոֆիա
Ծովիանեան Մարիամ
Ծովիանեան Մարիամ
Ծովիանեան Լիւբա

—

Կրասիլնիկեան Եղիսաբէթ (Բագուից)
Կուսիկեան Մարիամ



Ղլըճեան Սաթենիկ
Ղլըճեան Իւղաբեր
Ղորղանեան Աննա
Ղարագեօզեան Մարիամ
Ղորղանեան Նատալիա
Ղորղանեան Նունէ
Ղորղանեան Վարվառէ
Ղուկասեան Գայիանէ (Բագուից)

—

Մարտիրոսեան Հայկանուշ
Մելիք-Բէգլարեան Նատալիա
Մելիք-Բէգլարեան Նունէ
Մատինեան Ալէքսանդրա
Մանդինեան Սոֆիա
Մելիքեան Մարիամ
Միրզոյեան Կատարինէ
Միրզոյեան Նունէ
Մելիք-Ղարագեօզեան Կատարինէ
Միրիմանեան Նունէ
Միրվելեան Եղիսաբէթ
Միրիմանեան Վարվառէ
Մուսթաֆեան Շողակաթ
Մամասախլիսեան Նունէ
Մուսթաֆեան Մարիամ
Մակարեան Մարիամ

—

Յակովբեան Մարիամ
Յովհաննիսեան Դարիա
Յակովբեան Սոֆիա

Յովսէփեան Նունէ
Յարութիւնեան Եղիսաբէթ

—

Նազարբէգեան Նունէ

—

Շադինեան Վարվառէ
Շամխարեան Եղիսաբէթ
Շադինեան Եղիսաբէթ
Շադինեան Մարիամ
Շահնազարեան Նատալիա
Շանշեան Դարիա
Շահգինարեան Նատալիա
Շխեան Սաթինիկ
Շխեան Աննա

—

Չիգիանեան Վարվառէ
Չիթախեան Սոֆիա

—

Պատուականեան Նատալիա (Բագ.)
Պատեան Նատալիա
Պրոտոպոպովեան Մարիամ

—

Ջանջուղազեան Նունէ

—

Ռոտինեան Կատարինէ
Ռոտինեան Կատարինէ
Ռոտինեան Նատալիա
Ռոտինեան Նատալիա
Ռոտինեան Վարվառէ

—

Սարգսեան Սալոմէ
Ստեփանեան Նունէ (Մոսկվայից)
Սուզանաճեան Կատարինէ



Սունդուկեան Սոֆիա
Սալամբէգեան Նունէ
Սիլիկեան Սոֆիա

—

Վէրմիշեան Նատալիա
Վարշամեան Կատարինէ

—

Տէր-Դաւթեան Եղիսաբէթ
Տիգրանեան Նունէ
Տէր-Աստուրեան Վարվառէ
Տէր-Նիկողոսեան Եփեմիա
Տէր-Մկրտչեան Կատարինէ
Տէր-Գրիգորեան Վարվառէ
[illegible]
Փարեմուզեան Աննա
Փսարեան Սոֆիա
Փրիդոնեան Նունէ
Փրիդոնեան Մարիամ
Փրիդոնեան Վարվառէ

—

Քեփինեան Օլգա
Քիշմիշեան Թամարա
Քալանթարեան Մարիամ
Քալանթարեան Սոֆիա
Քալանթարեան Գայիանէ

—

Օրբելի Կատարինէ
Օրբելի Վարդանոյշ

—

# Բ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

## Մ Ո Ւ Տ Ք

| Մ Ո Ւ Տ Ք | Առանձին Ռ. | Առանձին Կ. | Ընդամենը Ռ. | Ընդամենը Կ. |
|---|---|---|---|---|
| ***ա) Անցեալ տարուանից մնացածը:*** | | | | |
| I. Առեւտրական բանկում ընթացիկ հաշիւ | 3720 | 45 | | |
| Առ ձեռն գումար | 28 | 31 | 3748 | 76 |
| ***II. Տոկոսաբեր թղթերը:*** | | | | |
| Արեւելեան փոխառութեան տոմսակներն իսկական գնով 3800 ռ. | 3468 | 70 | | |
| Մի տոմսակ առաջին փոխառութեան խաղարկութեան | 100 | — | | |
| Մի տոմսակ երկրորդ « » » գնուած | 226 | 90 | | |
| Չորս տոմսակ Թիֆլիզի ազնուական բանկի 3000 ռ. գնուած 80 ռ. կուրսով, հաշուելով եւ կտրօնք | 2526 | 85 | | |
| Ընդունուած է մի 100 ռուբլիանոց տոմսակ Թիֆլիզի քաղաքային վարկի ընկերութեան ինչպէս. | 100 | — | | |
| Մի տոմսակ սոյն ընկերութեան 500 ռ. արժողութեան, որ գնուած է | 346 | 39 | 6768 | 84 |
| ***բ) Նուիրաբերութիւններ:*** | | | | |
| Պ. Կոնստանտին Ալիխանեանից | 300 | — | | |
| Պ. Գէորգ Եւանգուլեանից | 100 | — | | |
| Անյայտ անձինքներից | 73 | 92 | 473 | 92 |
| ***գ) Անդամակցական վճարներ:*** | | | | |
| Իսկական (170 անդամ) | 1020 | — | | |
| Մշտական (3 անդամ) | 300 | — | 1320 | — |
| ***դ) Պարահանդէսներից, կոնցերտներից եւ այլն:*** | | | | |
| Պարահանդէսից վիճակախաղով | 993 | 50 | | |
| Ներկայացումից | 720 | — | 1713 | 50 |
| ***ե) Տոկոսիք Ընկերութեան գումարից:*** | | | | |
| Ընթացիկ հաշուից | 60 | 12 | | |
| Կտրօններից | 370 | 96 | 431 | 8 |
| ***զ) Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի արդիւնք:*** | | | | |
| Աշակերտուհեաց ձեռագործի վաճառումից | 70 | 50 | | |
| Ներսիսեան Հոգեւոր Դպրոցի Հոգաբարձութիւնից | 30 | 59 | | |
| Աշակերտուհիներից ուսումնական պիտոյից վճար | 18 | — | 119 | 19 |
| Բացի սորանից Ընկերութիւնն ունի երեք հատ օսմանեան արծաթեայ դրամ եւ դպրոցական կահկարասիք եւ այլ իրեղէններ: | | | | |
| Ընդամենը . | | | 14575 | 19 |

## Ե Լ Ք

| Ե Լ Ք | Առանձին Ռ. | Առանձին Կ. | Ընդամենը Ռ. | Ընդամենը Կ. |
|---|---|---|---|---|
| ***ա) Ընդհանուր ծախսերը:*** | | | | |
| Դիւանական ծախսեր | 7 | 85 | | |
| Մանր ծախսեր, հայտարարութիւններ եւ այլն | 41 | 30 | 49 | 15 |
| ***բ) Նուիրատուութիւնք յօգուտ ուսումնարանաց, մասնաւոր անձանց եւ ընտանեաց:*** | | | | |
| Յօգուտ մի երիտասարդի ուսման վարձ | 10 | — | | |
| « մի օրիորդի | 25 | — | | |
| Զէյթունի հրկիզելոց | 100 | — | | |
| « Ծղնեթ գիւղի ուսումնարանի | 100 | — | | |
| Ջրօհնեքին եւ Զատկին բաժանուեցաւ չքաւոր ընտանեաց | 204 | — | | |
| Օժանդակութիւն մասնաւոր անձանց | 28 | — | 467 | — |
| ***գ) Սուրբ Նշան եկեղեցւոյ ծխական դպրոցի ծախսեր:*** | | | | |
| Աշակերտուհեաց համար դեղօրայք | 5 | — | | |
| Կարասիք | 207 | 45 | | |
| Վառելափայտ | 73 | 50 | | |
| Ուսումնական պիտոյք | 66 | 76 | | |
| Ձեռագործութիւններ | 230 | 40 | | |
| Վարժուհիների եւ ուսուցիչների ռոճիկ | 1392 | 94 | | |
| Աղախնու ռոճիկ | 148 | — | | |
| Մանր ծախսեր | 37 | 35 | 2161 | 40 |
| ***դ) Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի շինութեան ծախսը:*** | | | | |
| Կարկատանք եւ նոր շինութիւնք | 309 | 18 | | |
| Սոյն շինութեան կրակից ապահովութիւնը | 44 | 45 | 353 | 63 |
| ***ե) Տոկոսաբեր թղթեր:*** | | | | |
| Մի տոմսակ Թիֆլիզի Առեւտրական բանկի 2000 ռ. տուած մի տարի ժամանակով | 2000 | — | 2000 | — |
| Գումար . | — | — | 5031 | 18 |
| Անցեալ տարուայ մնացած տոկոսաբեր թղթերը | | | 6768 | 84 |
| Ընթացիկ հաշիւ Թիֆլիզի Առեւտրական բանկում | | | 2700 | 53 |
| Առ ձեռն գանձարանում գտնվում է | | | 74 | 64 |
| Ընդամենը . . | | | 14575 | 19 |

# ՕՐԱԳԻՐ

1887 ամի 15 Մարտի, Ս. Նշան եկեղեցւոյ ուսումնարանում կայացաւ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովը՝ նախագահութեամբ ընկերութեան պատուաւոր Նախագահի Թեմակալ Առաջնորդի Հայոց Վրաստանի և Իմէրէթի՝ Տեառն Արիստակէս Եպիսկոպոսի, ի ներկայութեան ընկերութեան 53 անդամի։ Սոյն ժողովը գումարուեցաւ կանոնադրութեան 29 յօդուածի զօրութեամբ, ընկերութեան տարեկան ել և մտից հաշիւը և նախահաշիւը քննելու և հաստատելու համար։

Նախընթաց, այն է 26 Հոկտեմբերի 1886 ամի, ընդհանուր ժողովի օրագիրը կարդալուց և հաստատելուց յետոյ վարչութեան անդամ տիկին Սոֆիա Բաքայեանը կարդաց վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը, որից երևեցաւ որ 1886 ամի Մայիսի 4-ին Ընկերութեան ընդհանուր ժողովի նոր կազմակերպած վարչութիւնը ընտրել է իւր միջից Ատենապետուհի տիկին Նադեժդա Ալիխանեանին, Փոխ-Ատենապետուհի իշխանուհի Կատարինէ Բէհբութեանին և գանձապահ տիկին Վարվառէ Ռոտինեանին։ Վարչութիւնը իմանալով հայ դպրոցների բացման լուրը շտապեց շարունակել Ս. Նշան եկեղեցւոյ գաւթի մէջ դպրոցի շինութեան գործը, որ հայ դպրոցների փակման պատճառաւ դադարած էր։ Թէպէտ այդ շինութիւնը գլուխ բերելու համար նախահաշուով որոշած էր ծախսել 4500 ռ., սակայն վարչութիւնը շինութեան վերայ ծախսել է 6503 ռ. 60 կ., որովհետև շինութիւնը կատարելու միջոցին յայտնուել են մի քանի անհրաժեշտ ծախսեր որոնք նախատեսուած չեն եղել սկզբում կազմած նախահաշուի մէջ։ Այսպէս դպրոցի սենեակներն աւելի բարձր և լուսաւոր անելու համար հարկաւոր է եղել գետնից ցօկօլը բարձրացնել, որի վերայ նախահաշուից դուրս ծախսուել է 200 ռ., հիմքը պայմանից դուրս 10 խորանարդ սաժեն փորելու և շինելու համար 450 ռ., դպրոցի ստորին յարկը բնակութեան յարմարացնելու համար հարկաւոր է եղել պաշտգամբի տակ շինել սրահ, որ նստել է 300 ռ., որովհետև տեղի անյարմարութեան պատճառաւ անկարելի է եղել շինել կուաղի, ուստի նախահաշուի մէջ չնախատեսուած մի աղիւսապատ հոր է շինուել, որ նստել է 120 ռ., գաւթի քայքայեալ պատը հիմնովին շինելու, գաւիթը սալայատակելու և երկու դուռը կանգնացնելու համար ծախս. է եղել 570 ռ., վերահսկող ճարտարապետին տրուել է վարձ 200 ռ. և մանր ծախքի, այնէ կապալառուի հետ պայմանագիր հաստատելու, շինութեան պլանը կազմելու և այլն 163 ռ. 60 կ. Այս 6503 ռ. 60 կ. գումարի մէջ ստացուել է՝ 2250 ռ. Ս. Նշան եկեղեցուց, 197 ռ. հանգանակուած է Սրբազան Առաջնորդի հրամանաւ, 250 ռ. ընծայել է մեծ. տիկին Նատալիա Էնակոլոփեանը, իսկ մնացեալն այն է, 3806 ռ. 60 կ. ծախսուել է ընկերութեան գումարից։ Վարչութիւնը 27 հոկտեմբերի ընդհանուր ժողովի թոյլտուութիւնը ստանալով դիմել է Թիֆլիզի արհեստաւորաց դասակարգի վարչութեան Աւագին, որ սա հաղորդէ վարչութեան այդ դասակարգի որբ և չքաւոր ընտանեաց ցուցակը և նոցա հասցէները։ Ստանալով այդ տեղեկութիւնը վարչութիւնը յանձնել է իւր անդամներին 104 ռ. գումարը որ նոքա անձամբ դեկտեմբերի 30-ին բաժանել են ցուցակում նշանակուած անձանց և ընտանեաց մէջ, ուր 3, ուր 5, ուր 10 ռուբլի, նայելով ընտանեաց անդամների թուի և դրութեանը։ Վարչութիւնը սոյն ամի ընդունել է Ջրկինեանց եկեղեցւոյ ուսումնարանի նախկին վարչութիւնից 1987 ռ. և ստանալու է կրկին 30 ռ. ստացել է նաև զանազան ուսումնական պիտոյքներ և կարասիք այն պայմանով, որ այդ գումարից տրուի նորա

150 ռ. պարտքը, իսկ մնացածից անձեռնմխելի դրամագլուխ կազմել և նորա տոկոսիքով ուսուցանել Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի մէջ 15 աշակերտուհի գլխաւորապէս Զրկինեանց եկեղեցւոյ թաղից։ Վարչութիւնը համաձայն այս պայմանի ընկերութեան գումարից եւ մի մասը միացնելով ստացած գումարին գնեց 2000 ռ. արքունական արժէտոմս։

Վարչութիւնը իւր սրբազան պարտք է համարում յայտնել իւր խորին շնորհակալութիւնը հետևեալ անձանց՝ իշխանուհի Մարիամ Երկայնաբազուկ Արղութեանին որ նուիրել է 25 ռ. երեք որբ ու չքաւոր օրիորդաց տալու համար, բարեկրօն Հռիփսիմէ կոյս Թայիրեանցին որ խոստացել է տալ իւրաքանչիւր տարի 20 ռ. Ս. Նշան եկեղեցւոյ աշակերտուհեաց համար կարեւոր դէպքերում դեղօրայք գնելու, պ. Եսայի Փիթոյեանցին, որ իւր մասնաւոր թատրոնում տուած է յօգուտ ընկերութեան մի ներկայացում ու նորանից ստացած 225 ռ. արդիւնքը ուղարկած է վարչութեանը. պ.պ. Բաղդասար ու Զաքարիա եղբարց Աբովեաններին որոնք նուիրած են Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի համար Թագաւոր Կայսեր պատկերը փառահեղ շրջանակով. Ս. Նշան եկեղեցւոյ երեցփոխան պ. Յովհաննէս Տէր-Կարապետեանին, որ չէ խնայում իւր ձեռքից եկածը յօգուտ սոյն դպրոցի. Հայր Եզնիկ Երզնկեանին, օր. Վարվառէ Միրիմանեանին, պ. Նիկողայոս Գրիգորեանին, որոնք ձրիաբար ուսուցանում են՝ առաջինն երգեցողութիւն, երկրորդը ռուսաց լեզու և երրորդը գծագրութիւն Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի մէջ։ Տիկին Բաբայեանը վարչութեան կողմից ազդարարեց ժողովականներին որ առաջիկայ սեպտեմբեր ամսից դպրոցի մէջ կը բացուի երրորդ բաժանման մի զուգընթաց դասատուն, ուր աշակերտուհեաց հետ առանձնապէս կը պարապեն ձեռագործով։ Բայց որովհետև ներկայ շինութեան մէջ չկայ յարմար սենեակ, ուստի վարչութիւնը խնդրում է նախահաշուից դուրս



նշանակել 500 ռ. որպէս զի եկեղեցւոյ գաւթում կանգնած մի սենեակից բաղկացած բնակարանը այդ գումարով նորոգուի դասարան համար յարմարացնելու և հարկաւոր կահկարասիք ձեռք բերուի. Նաև խնդրում է հաստատել նախահաշուի մէջ դպրոցի համար որոշած ծախսը ամբողջապէս, որովհետև այդ դասատունը բանալու պատճառաւ դպրոցի վերայ հարկաւոր է լինում ծախսը աւելացնել։

Այնուհետև վարչութեան Ատենադպիրը կարդաց անցեալ 1886 տարուայ ել և մտից հաշիւը, որից երևեցաւ, որ ընկերութիւնը ունեցել է մուտք՝ նուիրաբերութիւններից 2511 ռ., 166 տարեկան անդամից ու մի մշտական անդամից —1096 ռ., պարահանդէսից և կոնցերտից 1885 ռ. 75 կ., տոկոսիք ընկերութեան գումարից 496 ռ. 45 կ., Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի շինութիւնը կառուցանելու համար 567 ռ. ընդամենը ստացել է սոյն տարի 6556 ռ. 20 կ., ունեցել է առձեռն դրամ 6761 ռբ. 18 կպ. և անձեռնմխելի գումար արժէտոմսերով 4726 ռբ. 40 կպ. համագումար 18043 ռ. 78 կ. Սոյն ժամանակամիջոցում ծախս է եղել՝ Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի պահպանութեան համար 855 ռ. 70 կ., սոյն դպրոցի շինութեան և կրակից ապահովութեան համար 6057 ռ. 10 կ., այլ և այլ ուսումնարանաց ու ուսանողաց տուած է և Ջրօրհնեաց տօնին բաժանած է 469 ռ. 45 կ., դիւանական և այլ վարչական մանր ծախսերի համար 143 ռ. 93 կ. ընդամենը ծախս է եղած 7526 ռ. 18 կ. Ունի առ 1-ն Մարտի 1887 ամի առ ձեռն գումար 28 ռ. 31 կ., ընթացիկ հաշիւ Առևտրական բանկում 3720 ռ. 45 կ., անձեռնմխելի գումար արժէտոմսերով 6768 ռ. 84 կ.—գումար դրամոց 10517 ռ. 60 կ., համագումար ծախուց հետ 18043 ռ. 78 կ.

Նաև կարդացուեցաւ վարչութեան կազմած նախահաշիւը սկսեալ Մարտի 1-ն 1887 ամի, մինչև Մարտի 1-ն 1888 թ. որից երևեցաւ որ մուտքը որոշած է ըստ հետևելոյն՝ 2 մըշ-

տական և 150 տարեկան անդամից 1100 ռ., պարահանդէսից, կոնցերտից և այլն 1500 ռ., նուիրաբերութիւններից 100 ռ., ընկերութեան գումարի տոկոսիք 400 ռ. գումար 3100 ռ. Սոյն ժամանակամիջոցին համար որոշուածէ ծախսը՝ Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի պահպանութեան համար 2282 ռ. այլ և այլ ուսումնարանաց միանուագ օժանդակութեան և չքաւոր անձանց և ընտանեաց բաժանելու համար 500 ռ. դիւանական և այլ մանրածախսերի համար 70 ռ. ընդամենը 2852 ռ.

Ընդհանուր ժողովը քննելով թէ ել և մտից հաշիւը և թէ՝ նախահաշիւը երկուսն էլ միաձայն հաստատեց. նաև որոշեց նշանակել ընկերութեան գումարից 500 ռ. վարկը, որով վարչութիւնը կարողանայ Ս. Նշան եկեղեցւոյ գաւթի հին բնակարանը նորոգել երրորդ բաժանման զուգընթաց դասատան յարմարացնելու համար և այդ դասատան կարևոր կահ կարասիք ձեռք բերել։

Ընկերութեան պատուաւոր Նախագահ Սրբազան Առաջնորդը պահպանիչով օրհնեց ժողովականներին և ժամի 1-ն գկնի ճաշոյ գոցեց նիստը։

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL011956